ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 օգոստոսի 2020 թվականի թիվ 297 - Ա

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ /COVID-19/ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ պարետի 2020 թվականի օգոստոսի 18-ի թիվ 253-Ն որոշման 2-րդ հավելվածի 1-ին կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերը՝

որոշում եմ

1.Սահմանել կանոններ կորոնավիրուսային հիվանդության /COVID-19/ պայմաններում ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատանքային գործունեության մասին համաձայն հավելվածի:

2.Մարզպետարանի գործունեությունն իրականացնել հնարավորինս հեռավար /առցանց եղանակով/՝ ապահովելով գործառույթների անխափան իրականացումը:

3.Կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները /մասնագետները՝ անհրաժեշտության դեպքում/ իրենց գործառույթային պարտականություններն իրականացնեն աշխատավայրում:

4.Կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելման միջոցառումների պատասխանատուներ նշանակել ՀՀ Տավուշի մարզպետարանի վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ Նունուֆար Հակոբյանին և ՀՀ Տավուշի մարզպետարանի վարչատնտեսական բաժնի մասնագետ Հովհաննես Քլոյանին:

ՄԱՐԶՊԵՏ՝ Հ.ՉՈՒԲԱՆՅԱՆ

X

2020թ. օգոստոսի 18
ք.Իջևան